

ՄԱՍՆ ՀԻՆՔԵՐՈՐԳ

ՅԱՏՈՒԿ ՃԱՇԵՐ. — ՊԱՀՔԵՐ ԵՒ ԾՈՄԵՐ

Միայն մեր տեսած հոգեւոր սեղանները չէին՝ որ առանձին նկարագիր ունենան: Կային ուրիշ կենցաղական բազմաթիւ առիթներ ալ, որոց մէջ կերակրոց մասնաւոր զանազանութիւն մը կը մտնէր: Սնունդը՝ բնախօսական ու բարոյախօսական օրինօք կախուած էր միշտ մարդուն հոգեկան տրամադրութեանց վիճակէն, որ յառաջ կու գար անձնական, ընտանեկան կամ ընկերային պատճառներէ, որոնք կրնային լինել զուարթ կամ տխուր: Ըստ այսմ ճաշն ալ կը լինէր աւելի կամ նուազ ուրախ եւ տրտում, պարարտ կամ չոր: Թէ այս պարագայն որքան սերտիւ կապուած է եղեր ամէն ժամանակի մարդկութեան հետ, ամէն ապացոյցէ յառաջ մեր փորձն ու զգացումները կը վկայեն: Վիշտը կը գողնայ մեր ախորժը, ժպիտը զայն մեզ կը վերադարձնէ: